

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿՅՈՒՐԵՂ ՍՐԱՊՅԱՆԻՆ

Անվանի քանասեր, լեզվաբան, քառաբանագիր Ստեփան Մալխասյանցը (1857—1947) երկար ուարիներ նասակագրական կապ է ունեցել լեզվաբան, մարեմատիկոս Կյուրեղ (Ալեքսան) Մալխասյանի (1844—1895) հետ: Ստորև հրապարակվող նամակները քաջահայտում են Ստ. Մալխասյանցի կյանքի, ուսումնառության և ստեղծագործական գործունեության մասնավորապես պետերբուրգյան շրջանի հետ առնչվող դրվագներ. պարունակում են նաև լեզվադիտական, պատմ-նսրդիտական որոշ արժեքներ կայացնող փաստեր, տեղեկություններ ժամանակի հասարակական անցյալի վերաբերյալ:

Նամակները տպագրվում են մասնակի կրճատումներով: Գրաճ պահվում են ՀՍՍՀ Միեհիստորեների խորհրդին առերիեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) Կ. Սրապյանի արխիվային ֆոնդում (բղր. 81Ժ, վավ. 255, բղր. 82, վավ. 41, 821—11, 96, 97, 114, 120, 135, 144, 159, 16611, 178, 202, 213, 216, 567):

Ա. Չ. ԶԱՔԱՐՅԱՆ

1

7 դեկտեմբերի, 1883

Ս. Պ. Բուրգ

Վաղուց է, որ ոչ Ձեզանից տեղեկություն եմ առնում, և ոչ Ձեզ լուր տալիս իմ մասին: Ձեր լուրիյան պատճառներ երեկ այն է, որ լսած եք նորից, իբր թե ես պատկված եմ և այլն,— որ ամենևին անհիմն է. ես շարունակում եմ Պետերբուրգում միայնակ ապրել, և պարապած իմ թարգմանություններով, դրական ուրիշ աշխատություններով, այստեղի հայերեն նոր տպարանի հրսկողությամբ և ընթերցմամբ: Նյութական դրությունս եթե շատ լավ է ասիմ, սուտ կէինի, բայց փա՛ռք աստծո, ոչ միայն նեղություն չեմ կրում, բայց հերվան պարտքերս ամբողջապես վճարեցի (մոտ 200 ուրլի) և երբեմն կարողանում եմ օգնել ծնողներին:— Պետք է գոհ լինել գոնե այսքանովն էլ, մանավանդ որ առաշին տարին է, որ իմ գլխիս ապրում եմ առանց որեէ նպաստ ստանալու, իմ ձեռքերիս աշխատանքով:

Խնդրում եմ Ձեզանից «Լիր թագավոր» թարգմանությունս ետ ուղարկել, կարելի է այստեղ տպագրեմ մյուս թարգմանությանս, «Մակրեթ»-ին² հետ ի միասին:

Լեհաստանի հայերի կաթուղիկ եկեղեցու հետ միանալու պատմությունն³ արգեն տպագրված է, դուրս եկավ տասն և յոթ տպագրական մեծ թերթ. մնում է այժմ տպագրել առաջարանը (որը դեր պատրաստ չէ<>) և հատուկ անունների ցանկը: Առաջիկա տարվա սկզբներում կարծեմ հրատարակված կլինի:

Ոգրայրս Ախալցխայի Կարապետյան և Ողիսարեթյան ուսումնարաններում դասատու է տարեկան ամենաշնչին ռոճիկով: Ըս նորան խորհուրդ տվի հանձն առնիլ այդ պաշտոնը, որ թերևս ավելի արդյունավոր լինի ապագայում:

Հասցես հաճեցեք գրել հայոց եկեղեցին, Գեորգ քահանա Խանթարճյանի անունով, որ ինձ հասցենե...

1 «Լիր թագավոր» լույս է տեսել 1887-ին:

2 «Մակրեթ» տպագրվել է 1892 թ.:

3 Նկատի ունի 1884 թ. Պետերբուրգում տպագրված «Բռնի միություն հայոց Լեհաստանի լրիւ եկեղեցւոյն Հոռվմա: Ժամանակակից հիշատակարան» ուսումնասիրությունը:

12 ապրիլի, 1884

Ս. Պ. Բուրգ

Ճեր վերջին նամակը Սուրբ Խաչ վանքից՝ ստանալով, մինչև այսօր հետաձգեցի պատասխանս, վասնզի օրեցօր սպասում էի, թե կստանամ Վեր թագավորի և հեռագրի, որի համար ասել էիք Ձեր նամակին մեջ, թե մոտ օրերս կուղարկեմ, և այնուհետև կամենում էի միասին պատասխանել։ Բայց որովհետև Դուք ուղարկելն ուշացրիք և գուցե ուշացնեք, ես էլ չսպասեցի, և կգամ այս նամակովս երկար լռության հանցանքը քաղելու և Ձեզ շնորհավորելու Ս. Հարություն տոնը։

Իմ վիճակիս մեջ կարևոր փոփոխություններ չեն եղել. դեռ առաջվան պես Եղյանի² և Սա-նասարյանի³ զրազրություններից մի մասը կատարում եմ, թարգմանություններով և տպարանի գործերով եմ պարապում, ազատ ժամանակիցս մաս հանելով և՛ հայերեն լեզվի ուսման, և՛ ըն-տիր մատենագիրների ընթերցանության։ Այս վիճակը թեպետ առաջ ինձ բավական ձեռնտու էր Լերում, բայց այժմ հետզհետե համոզվում եմ, որ անհետևանք և ապագա լուսեցող ժամավա-նասություն է, որի գրեթե միմիայն արդյունքը մի փոքր հաց է։ Եթե իմ ուժերիս կայտառության ժամանակ մի փոքր հացի համար ապրիմ, այդ կյանքը արժե՞ շարունակել։ Ես ուզում էի այս տարի Կավկաս գնալ, բայց Եղյանը համոզում է, որ մնամ և հայերեն լեզվի մասնավորապես ուսումնասիրության պարապեմ, ոչնչով, ասում է, կարելի կլինի համալսարանում արտակարգ քննություն սահմանել ձեզ համար, և զոնե մի բանով հետ դառնաք։ Խորհուրդն ինքնըստինքյան լավ է. բայց դրամն իր ետևի կողմն էլ ունի. այսինքն, մինչև այդ քննության հաջողելն առնվազն երկու-երեք տարի կանցնի, և այս բոլոր ժամանակը իմ ներկա վիճակս պիտի շարունակվի... Որովհետև եթե հայտներ, կամ կամենար, որ հայտնվի, թե իսկապես ի՞նչ պետք է լինին քննու-թյան առարկաները կամ ի՞նչ սահմանի մեջ, ես կես տարվա մեջ պատրաստ կլինեի, իսկ լայս եերպով կարելի է պատրաստ չլինիմ մինչև այն ժամանակ, երբ նա մտածե, թե սրավական աշ-խատեցավ. այժմ պետք է մի փոքր վարձատրություն անել։ Ես դեռ որոշ մի բան չեմ վճռել, հենց Քրիստոսի ասածին պես, թե մի հոգայք վասն վաղուհի, այսպես եղել եմ մանկությունից ի վեր, երեխայսպես էլ կմնան մինչև մահ։

Տանից ստանում եմ նամակներ. ծնողքս և եղբայրս առողջ են, բայց հայրս անգործ է, մեկ կողմից գործի պակասության, մյուս կողմից իր ծերության պատճառով. նոքա ապրում են եղ-բորս ստացած ռոճիկով և իմ երբեմն ուղարկած նպաստներով։ Հույս կա, որ եկող սեպտեմբերից եղբորս գործերն ավելի հաջող զնան—(նույնպես և իմոնքս), և այն ժամանակ նոցա ապրուստի ավելի ապահով կլինի։

Եթե հնար գտնեք Վերին շուտով ուղարկելու, ինձ շատ կպատվաբերի. որովհետև պ. Աղամ-յան (ղեկապետը)⁴ լսելով, որ ունիմ այդ թարգմանությունը, շատ խնդրեց, որ իրան կարդամ. երեխ նա իր ներկայացրած թատրոնական գովածքների (իր ռեպերտուարի) մեջ կանցնե և իմ թարգմանածս։

1 Խոսքը նոր նախնիների Սուրբ Խաչ վանքի մասին է։

2 Նկատի ունի Կարապետ Եղյանին (Եղով. 1835—1905)։

3 Խոսքը Մկրտիչ Սանասարյանի (1818—1890) մասին է։

4 Նկատի ունի Պետրոս Աղամյանին (1849—1891)։

5 Պ. Աղամյանը 1886 թ. Թիֆլիսում պատրաստել և ներկայացրել է Վերի արքայի Սա-Մախիսությանցի թարգմանությունը։

2 ղեկավարների, <18>84

Ս. Պետերբուրգ

Ճեր վերջին նամակն ստացա արժանապատիվ՝ Հովհաննես քահանայի ձեռքով։ Ձեր արած դիտողությունը ներգործական և կրավորական բաղադրյալ ժամանակների մասին հայտնի էր Լ ինձ, թեև ոչ այնպես մանրամասնորեն, ինչպես Դուք գրել եք. զարմանում եմ, թե ինչպիսի

անողությունը կամ մոռացմամբ պատահել են գրքին մեջ այդ հայկաբանության թերությունները: Մեծ շնորհակալությամբ պիտի կարգամ նաև այն բազմաթիվ դիտողությունները, որոնք խոստանում են ինձ դրել, և որոց ես անշուշտ պետք ունիմ և պիտի ունենամ:

Որչափ հասկանալ կարողացա Ձեր նամակից, Ձեր այժմյան վիճակը գոհացուցիչ լինելուց հետո է, մանավանդ նախարարության տնօրինությունից հետո, որ Ռուսաստանում որևէ պաշտոն վարել չկարողանաք: Այս դեպքում, որ ես հոգով չափ վիշտ եմ զղում, ավելորդ է քաղաքավարական ցավակցություն հայտնել:—Ոչ ես և ոչ պ. Նոյանը, որից հարցրի հիշյալ տնօրինության չարժաոթի, ոչինչ բավականացուցիչ պատասխան չենք կարող տալ. սակայն պ. Նոյանը խոստացավ, եթե հարմար առիթ պատահի, հարցուփորձ անել այս տնօրինության մասին:

Մի լուր ունիմ Ձեզ հաղորդելու, որ կարծում եմ շատ ի դեպ էլ, նս հաստատապես գիտեմ, որ Մոսկվայում մտադրություն կա Ձեզ այնտեղ հրավիրելու իբրև քարոզիչ առաջիկա մեծ պահոց օրերին համար (բայց խոստովանաբար պետք է հայտնեմ, թե քարոզչությունը միմիայն պատրվակ է. պ. Անանյանը, որ Ձեզ այդ առաջարկությունը պիտի գրե, ուղում է առժամանակ ծանոթանալ Ձեզ հետ, որպեսզի հետո Ձեզ առաջարկե լաղարյան ճամարանում կրոնի դասավանդությունը:—այս մասին դեռ առիթ կունենամ գրելու): Եթե Դուք համաձայնում եք այս հրավերին, հաճեցեք ինձ տեղեկություն տալ այս մասին, նաև հայտնել, թե Մոսկվայում ամսական ապրուստի համար ի՞նչ կարևոր կլինի Ձեզ, կամ ուրիշ խոսքերով, ամսական որքա՞ն ռոճիկ բավարար կհամարեք Մոսկվայում ապրելու համար:

Այսօր ձեռքումս փող ամենևին չկա, որպեսզի նամակիս հետ ուղարկեի, բայց լիահույս եմ խիստ կարճ միջոցից հետո (4—5 օրից) ուղարկել Ձեր հայտնած գումարի կեսը. մյուս կեսն էլ, եթե աստված հաշտություն տա, հունվար ամսին թերեւ հնար ունենամ լրացնելու: Հույս ունիմ հանդիպելու Ձեր ներողամտությանը, որ Ձեր առատ բարերարությանն առ իմ ծնողքս, այսպիսի կծծի փոխարեն անելու ստիպված եմ առ ժամս:

Բժիշկ Տեր-Գրիգորյանցին, երբ տեսնեմ, կհաղորդեմ նորան Ձեր ողջույնը: Մեկ ամիս առաջ, երբ ես նրան տեսա, հաղորդեց ինձ, թե հաշտությամբ ավարտել է բուլոյ դժվար քննությունները և թե մնում են մի քանի անոջան ու դյուրին առարկաներ: Կարծում եմ, թե այժմ նա բոլորովին ավարտած կլինի քննությունները...

Ես այժմ գլխավորապես աշխատում եմ Աստղիկի պատմության ընթերցվածների համեմատությամբ (Ժե դարի ընտիր գրչագրի հետ) և ծանոթագրությամբ: Ընթերցվածների համեմատությունն արդեն վերջացրել եմ, նշանակելով մանրամասներն և խիստ անշշան տարբերություններն, ինչպես են, ցանկ-ցանք, Հովհաննէս-Հովաննէս կամ Հովանէս և այլն. ախպես որ յուրաքանչյուր երեսում, միջին թվով, 8—9 բաղդատություններ կան: Մանրություններն արդեն սկսել եմ գրել, և մոտ մեկ շաբաթից տպել կսկսենք: Այս գործն էլ ինձ հանձնարարեց կատարել պ. Նոյանը, որն այն պիտի տպե հանգուցյալ Հովսեփ Իզմիրյանի հօգուտ Հայերեն գրքերի հրատարակության ընկերության կտակած 1000 ռուբլու հաշվով. եթե փող ավելնա, պիտի հրատարակե նաև կաստիլերացու կամ Ղեոնդի պատմությունները: Բոլոր բաղդատությանց, 4—5 թերթ ծանոթությանց, ընդարձակ առաջարանի և տպագրական սրբագրության—այսինքն գրքի հրատարակության բովանդակ աշխատությանց համար—իմ ստանալիքս է... 150 ռուբլի:

1 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Աստղկան Պատմութիւն տիեզերականը» Ստ. Մախասյանցի առաջարանով և ծանոթագրություններով լույս է տեսել 1885 թ., Պետերբուրգում:

4

5 դեկտեմբերի, <18>84

Ս. Պետերբուրգ

Ահա ուղարկում եմ խոստացածս քսանհինգ ռուբլին, որ խնդրում եմ ներողամտությամբ ընդունել:

Երկու օր առաջ Ձեր նամակին պատասխան գրեցի. հուսամ թե ասացած կլինեք և պատասխանած արդեն:

Եթե ունեք ժամանակ, խնդրում եմ ինձ գրեցեք Ձեր կարծիքը լեզվագիտական մի խնդրի մասին. այն է, թե ի՞նչպես պետք է շաքատրել «Աստղնիկ» բառի մեջ գտնվող «ն» տառը: «Մ». էմբին կարծում է, թե այդ բառը կաղմվել է հետևյալ կերպով. ասող-ն-ի-ի, այսինքն Տա-

րոնեցի Ստեփանոս վարդապետին կոչում էին «ասող» կամ «ասողն» (այնչա ասողը կամ երգիչը)։ այս երկրորդ ձևին վերա, որպես թե, ավելացած է «իկ» փաղաքական մասնիկը—«եկ»-ընս տեղ չէ անում այս բացատրությունը։— Ես էլ կարծում եմ թե «եիկ» փաղաքական է, ավելացրած «ասող» բառին վերա, բայց «եիկ» փաղաքականի ուրիշ օրինակ չունիմ...

Հ. Գ. Բժիշկը Ձեզ հատուկ բարե է չիշում. քննություններն ավարտել է. մնացել են երկու չորոնական պարապմունքներ։

5

25 փետրվարի, 1885

Ս. Պետերբուրգ

Ձեր փետրվար 15 թվականով նամակն ստացա, ինչպես նաև ստացել էի նախկին նամակը հանդերձ Ասողիկի մեկ հատվածով...

Ասողիկի հատվածին համար անհուն շնորհակալություն։ Թեպետ Ձեր ուղարկածն ամբողջապես կար իմ ձեռագրիս մեջ, բացի երկու տողից, որ Վենետիկից բերել տվի, սակայն Ձեր օրինակը մեկ-երկու գեղեցիկ ընթերցվածքներ ընձեռեց, որոնցից օգտվեցա. բայց մանավանդ համեմատ լինելով իմ ձեռագրիս մեծ մասամբ, իսկ իր հին ուղղագրությամբ (աւ=օ, դ=լ, ովն=ոն օն են) գերազանցելով, ինձ առիթ կտա առաջաբանի մեջ լավ տեսություն գրել այժմ գտնվող Ասողիկի ձեռագիրներին վերա, թե ո՞րը որից արտագրված կամ գոնե ծագած են և ո՞րը պետք է համարել ընտրելագույն։ Ցավ է, որ այն օրինակը, որից Դուք արտագրել եք հիշյալ հատվածը, ձեռքիս տակ չունեի ամբողջապես, թեպետ և կարևոր ընթերցվածքներ չեմ սպասում նորանից։

Շատ ուրախացա, որ Մոսկվա և հետո Պետերբուրգ պիտի գաք։ Ոչ միայն անհամբեր սպասում և՛ Ձեզ տեսնելու և մատենագրական խնդիրներով զբաղելու, որոնք բավական քանակությամբ ունիմ, բայց և հույս ունիմ, թե տեսնվելով պ. Նոյանի և Սանասարյանցի հետ Դուք հաջող ելք կտաք սկսված և չվերջացած բանախոսությանց կարևոր վարժարանում պաշտոն ստանձնելու մասին...

6

4 մարտի, <18>85

Ս. Պետերբուրգ

Մի քանի օր առաջ Ձեր վերջի նամակին պատասխանել էի, պետք եղած տեղեկություններն հաղորդելով...

...մատենագրության վերա խոսելիս շատ նյութեր ունիմ, որոց վերա Ձեր կարծիքը թանկագին է և ինձ։ Առ այժմ մի նյութ ձեռնարկեմ։

Ձեզ հայտնի կլինի, որ պ. Խալաթյանցը՝ 1883 թվին մի գիրք հրատարակեց «Ղազար Փարպեցին և գործը նորին» վերնագրով։ Այս գրքին մեջ նա աշխատում է, ի միջի այլոց բազմաց, ապացուցանել, թե Փարպեցին իր Պատմության առաջին մասը (իսկապես երկրորդ մասը) գրելիս—վարդանանց պատերազմին վերա, այլի առաջ է ունեցել Նոյի պատմությունը, որին հետևում է գրեթե ամեն տեղ և շատ անգամ բառ առ բառ արտագրում է նորանից, բայց երբեք Նոյի անունը կամ գիրքը չէ հիշատակում. և թե այս երկուքի մեջ եղած մանր տարբերությունները հօգուտ Նոյի պետք է վճռել (այսինքն այն, որ երկու պատմագիրները տարբեր են ավանդում մի անցք կամ մանրամասնություն, ամեն տեղ հավատարմության արժանի է Նոյին, իսկ Ղազար անարժանահավատ է)։ Իր այս խոշոր կարծիքին միակ ապացույց մի քանի նախադասություններ են. որ նույն ոճով և նույն բառերով պատահում են երկու պատմությանց մեջ։

Վերջի տարին ես ուղղորդությամբ 3—4 անգամ Ղազարը կարդացի, համեմատելով հանդերձ Նոյի հետ և բաղձաբեր գիտություններ արի։ Թողնելով ուրիշ հետևանքները համարաժողովոր առիթով Ձեզ հաղորդելու, այսպիսի ասիմ այժմ, որ ես հետևյալ եզրակացությանց հասա։

ա. Ղազար Նոյիցինք ընդամենը 15—20 տարի հետո գրելով իր պատմությունը կառավար էր տեսած և լսած իսկ չլինել Նոյիցի գրքի մասին.

բ. էթե մի վարկյան ենթադրենք, թե Ղազար կարդացել էր Նոյիցի գիրքը, այնպիսի անտեղություններ առաջ կգան, որոց բացատրելու համար Ղազարին խարդախող և այլն պետք է նախաշնչք.

13 «Հաղթան» № 1

գ. Ղազար իր բուր (Վարդանանց) պատմության մեջ, թե կարևոր և թե երկրորդական կենտրոնում, ավելի արժանահավատ է, քան Նղիշեն։

դ. պատահած բառերի և ոճերի նմանությունները (շատ սակավաթիվ, քան ենթադրում է խալաթյանց) առաջ եկած են երկու պատմագիրների աղբյուրների նույն—կամ նմանությունից. և վերջապես

ե. Ղազար Նղիշի գիրքը կարգացած չէ եղել իր պատմությունը գրելիս։—Եթե Դուք ձեռքբերումը ունիք պ. խալաթյանցի գիրքը և երկու պատմագիրները, հույս ունիմ ժամանակ չեք խնայիր այս խնդիրը նորից քննելու և արդյունքը հաղորդելու. որովհետև պ. խալաթյանց պատրաստվելով Ղազարը տպել, պետք է օր առաջ նրան համոզել իր կարծիքների թերության մեջ. որ մի գուցե Ղազարի պես առաջնակարգ և հիմնավոր ոսկեղեն գիրքը սև քողով ծածկված զուրս գա և լցունձ այն ժողովրդականությունը, որին շատ և շատ արժանի է։

Մի գործի մասին այժմ խորհրդաբար մեկ-երկու խոսք գրեմ։— Եթե Դուք այդտեղ մնալու լինեք լավական ժամանակի համար, ես շատ կցանկանալի հոգևոր դպրոցում հայերեն լեզվի և մատենագրության ուսուցիչ լինել. լսեցի, որ լեզվի դասատուից զո՛ւ չեն և նորն են փնտրում— չէ՞ կարելի, որ ես ինձ առաջարկեմ, հանձնարարական թղթերով պ. Եղիշյանց և Պատկանյանից²— և ի՞նչ հավանական հետևանք կունենա իմ առաջարկությունս։ Կրկնում եմ, այս կանիմ այն դեպքում, երբ գիտնամ, թե Դուք այդտեղ մնալու եք. առանց այս պայմանին, ինձ ամեն տեղ նույն է և ավելի վատ տեղերը թերևս լավագույն ինձ համար։— Եթե միությունը և Եկեղեցին կարծեմ նույնպես լավ հանձնարարություններ կլինեն, բացի Ձեր վկայությունից։

Ուղարկում եմ Եկեղեցիին համարները ներկա հունվարից սկսալ. հետզհետե էլ կուղարկեմ. միայն խնդրեմ Ձեր ճիշտ հասցեն գրեք։...

1 Խոսքը Գրիգոր խալաթյանցի (1858—1912) մասին է։

2 Նկատի ունի Փերովբե Պատկանյանին (1833—1889)։

7

22 հուլիսի, 1885

Ս. Պետերբուրգ

Խոստացածս միայն այսօր կարող եմ կատարել, որովհետև ամսիս 20-ին միայն վրդ ստադա, և երեկ կիրակի լինելով, նամակատուն հանձնել չկարողացա։

Ավելորդ է ասել իմ կողմից, թե իմ ձեռքից եկածն այսքան է միայն. ուստի հուսով եմ, սիրով ու ներողությամբ կընդունեք այն։...

Իմ վիճակիս մեջ կարևոր փոփոխություն չկա. Ասողիկի բնագիրն արդեն տպված է, այժմ ծանոթություններն են տպվում. սեպտեմբերին ամբողջ գիրքը պատրաստ չլինի, բաղկացած մոտ երեսուն թերթից։ Արտաքին տեսքը գոնե գեղեցիկ է, աշխատություն խնայված չէ. չգիտեմ սակայն թե որչափ է նորա ներքին արժանավորությունը։

Ասողիկից հետո տպվելու է Ղեոնդ. նորա համեմատությունն արդեն արել եմ. օգոստոսին ավելի մասնավորապես կսկսիմ աշխատել վերան, զուգընթացաբար մեկ ուրիշ թարգմանական գործի հետ. այսպես հնար ունիմ սուղ ապրուստ ճարելու, բայց թե սարս վերջն ի՞նչ պետք է լինի՝ ինձ դեռևս հայտնի չէ։—Մյուս ամառ մտադիր եմ հայրենիք գնալ. տեսնենք ինչ հետևանք կունենա։

Ն. Կոստանյանցը՝ անցյալ շաբթու Պետերբուրգ եկավ. երեկ մոտոս հանդիպեցավ ամարանոցում և ծանոթացանք։— Կարծես թե բնության և բախտի հարվածներին տակ ընկճված բազմաշարժար մի անձ լինի. այնպես խղճուկ, հանդարտ է. որչափ նորա պատկերներից, որ առաջ տեսել եմ, հետևյալի, նա բավական փոխվել է։— Ուզում է Պետերբուրգում փոքր ինչ հանդիսիք. բայց կարելի է եկել է մագիստրոսի քննություն տալու, և ինձանից պահեց։

Զ. Գ. Երեկվան տոնին պատճառով նամակատունը փակ էր։ Մեկ օր էլ ավամա ուշացավ նամակս։

1 Նկատի ունի Կարապետ Կոստանյանին (1853—1920)։

8

13 օգոստոսի, 1885

Ս. Պետերբուրգ

Մնացած 1-ին գրած Ձեր նամակն երեկ ստացա. որովհետև այժմ ամարանոցում եմ ապրում, իսկ Ձեր նամակն իմ հին հասցեովս էր, ուստի փոքր ինչ ուշ ձեռքս հասավ, մինչև թղթատարության պաշտոնատունը նոր հասցեն փոխեցի գտնելու։ Որպեսզի այսպիսի դեպք կամ նամակի կորուստ այլևս չպատահի, այսուհետև գրեցեք այդքան հեղեցին, Գևորգ քահանա նախարարին անունով, ինչ հասցեն երբեք (նոր հասցեով մի փաթեթ կղնեմ նամակիս հետ)։...

Համարակալության պաշտոնի մասին մոռացել էի առաջին անգամ գրել. ոչ իմ հմտությանս և ոչ պարապմունքիս հարմար չէ այդ պաշտոնը—ես համարակալություն գործնականապես չգիտեմ, որ եթե սովորեմ էլ, իմ մյուս պարապմունքներս պետք է զոհեմ համարակալ լինելու համար։ Վարձապետությունն ավելի հարմար էր ինձ, որ դժբախտաբար չհաջողեցավ—Այժմ պ. Եղյանի շնորհիվ ես նոր պաշտոն ստացա տեղվույս կայսերական մատենադարանում, Վաղը պետք է ներկայանամ մատենադարանի կառավարին. չգիտեմ սակայն, թե իսկո՞ւյն պետք է ստանձնեմ պաշտոնս, թե սեպտեմբերից, Պաշտոնս երևելի բան չէ, օրական 3 ժամ մատենադարանում պահանջված գրքերը տալ ցանկացողներին, ամսական 25 ռուբլի, բայց պ. Եղյանն ասում է, թե մտնելն է դժվար, իսկ առաջ զնալը ավելի դյուրին է։ Տեսնե՞ք աստված ի՞նչ կհաջողվի—Միևնույն ժամանակ սկսել էմ պատրաստվել նորից քննություն տալու գիմնազիայում, որ եթե հաջողի. ճանապարհս այնուհետև կրացվի։

ձպագրության մասին հետևյալ տեղեկությունները կարող եմ տալ. նամակիս հետ գրածս Ասողիկի մեկ թղթի դիրքով (մեկ երեսում 32 տող, մատիտով գծված երկայնության մեջ) մեկ իւրիշ շարելը և տպելը կարժենա 15—16 ռուբլի, թուղթը կոկկելով հանդերձ, առանց կոկկելու՝ մեկ տուրլի պակաս. թերթը պարունակում է 16 երես (գրածս օրինակը 1/8 թերթ է ուրեմն)։

Իսկապես դրված օրինակի թերթին պ. Եղյանը վճարում է մոտ 14 ռուբլի, բայց որովհետև կազմի թուղթ, կազմի տիպ և ուրիշ այսպիսի մանր ծախսեր էլ կան, ուստի ես 2 ռուբլի ավելի գրեցի, մասնավաճեղ որ տպարանատերը մասնավոր պատնառներով պ. Եղյանից համեմատաբար քիչ է առնում։ Միջանկ կարգի թուղթը կարելի է գնել 6—7 ռուբլիով կապոցը, որից դուրս է դալիս 950 թերթ (կապոցը կրկնակի մեծության է. հասարակ մեծության թղթի կապոցը կարժենա վերահիշյալ գնի կեսը, 3—3,50 ռուբլի)։ Ուրեմն, եթե 1000 օրինակ տպելու լինիք, թերթը կարժենա, բոլոր ծախսերն ի միասին հաշվելով, 22—23 ռուբլի։ Սրբագրությունը ես կանխմ։

Այժմ մենք ունենք թ. 10 տառեր էլ (ներկա օրինակի տառերը թ. 12 են, ավելի խոշոր, քան թ. 10-ը). այնպես որ գրքի էական մասերը թ. 12-ով կարելի է տպել, նվազ կարևորը՝ թ. 10-ով, իսկ մանր գիտելիքները, ծանոթությունները և այլն, օրինակիս մեջ գտնված մանր տառերով (թ. 8), եթե մտադրություն ունիք տպել տալու, գիտնալու եք, որ 15 թերթանոց մի գիրք երեք ասուլի միջոցով հազվի տպագրվի այստեղ, որովհետև մեկ գրաշար միայն ունինք. ուստի ըստ այնմ պետք է հաշվեք։

Ասողիկի տպագրությունը սեպտեմբերի կեսերին կվերջանա. եթե Ձեր գիրքը լինի, Ղեկունի տպագրությունը կհետաձգեմ, վառն գի ժամանակս շատ սուղ է նորա վերան աշխատելու, գիմնադիտի քննության պատրաստվելուս պատճառով։...

9

12 դեկտեմբերի, 1885

Ս. Պետերբուրգ

Ասողիկն արդեն բավական ժամանակ է, որ տպագրությունից դուրս է եկել. սակայն ես դեռ չկարողացա Ձեզ ուղարկել, չիշտ չգիտալով թե արդյոք նախընտանի եք դեռ, թե մեկնել եք. որովհետև Ձեր վերջին նամակում գրեթե մասս-բարով էիք գրել։ Մտածեցի այժմ այս եղանակը, որ նամակս նախընտանի գրեմ, որ եթե այդտեղ լինիք, ինքնին ստանաք, իսկ եթե այդտեղից հեռացել եք, մեկ ուրիշը, որին հանձնարարություն թողած կլինիք, ստանա և Ձեզ հասցնե, որպեսզի ինքն իմաց տաք Ձեր հասցեն։

— Տեսնե՞ք կհաջողվի։...

Իմ վիճակիս մասին երկու խոսքով կարելի է ամեն ինչ ասել. առավոտ, երեկո՝ լատիներեն և հուներեն եմ սերտում. ցերեկը մոտ չորս ժամ՝ կայսերական մատենադարանում ծառա-

ում: Այս վիճակը միօրինակությամբ մինչև հունիս պիտի տևէ, երբ վերջնականապես պիտի որոշվի, թե ի՞նչ է լինելու իմ ապագաս: Ուրիշ որևէ պարապմունք—գրական, թե ուրիշ տնտեսական խոշոր եմ առ այժմ, բոլոր ուշադրությունս նվիրելով գիմնադրային քննություններին:

1 Այստեղ և հետագա նամակներում խոսքը նոր նախշեկանի մասին է:

10

<Փետրվար, 1886

Ս. Պետերբուրգ>

Մեծ. պ. Սալթիկյանի¹ ձեռքով ստացա Ձեր նամակն, որի մեջ կարդացի հայտնածնիդ կարծիքները Ասողիկի մասին: Դուք ասում եք, թե երբեմն վերավորիչ լեզու եմ գործածում նախորդ գրողներու դեմ. եթե հիրավի կա այդպիսի անհավանություն, նա գրողների դեմ չէ, այլ գրվածքների. գիտական գրվածքների մեջ սովորություն է համեստ, բայց պարզիպարզ հայտնել, թե այսինչ կարծիքը սխալ է, այսինչն անպետք, այսինչն ուղիղ: Շատ անգամ և լավագույն մատենագրողաց մեջ այնպիսի խիստ քննադատություններ եմ տեսել ուրիշ ականավոր մատենագիրների վերա, որ Ասողիկի մեջ պատահած «անհավանության լեզուն» ոչինչ պիտի համարվի նոցա ներկատմամբ: Ես աշխատել եմ, որչափ կարելի է, համեստ լինել և պատվով խոսիլ նախորդ գրողների վերա. եթե այս կետում չեմ հաջողել զժրախտաբար, մասամբ ես եմ հանցավոր, բայց և նոքա մասամբ: Ձեր բացատրությունը «գիտաբար» բառի մասին, շատ հավանական թվեցավ ինձ. սիստոս, որ առաջուց չգիտեի:

Ասողիկը Ձեզ վաղուց պիտի ուղարկեի, բայց Ձեր նախկին մի նամակից հետո, ուր գրեթե մնաս բարով էիք գրել ինձ, չգիտեի թե որտեղ էիք և չէի էլ կարող գիտնալ, այսպես ստիպված էի լռել, մինչև Աբրահամ Զամինյան նախշեկանից պատահաբար ինձ մի նամակ գրեց, որին պատասխանելիս՝ հարցրի Ձեր մասին, թե որտեղ եք: Նա ինձ հաղորդեց Ձեր դեռ աղտեղ լինելը. այնինչ ես պատրաստվում էի Ձեզ գրել և Ասողիկն ուղարկել, պ. Սալթիկյանն եկավ և Ձեր նամակն ինձ բերեց:...

Պ. Սալթիկյանին հետ կուղարկեմ Ձեր օրինակ Ասողիկը, որ այսքան մոտոս մնաց ձախողարար:— Անդադար պարապում եմ: Ամառս հայրենիք պիտի գամ:...

1 Խոսքը նոր նախշեկանի քաղաքագլուխ Գրիգոր Սալթիկյանի մասին է:

11

10 մայիսի, <18>86

Ս. Պետերբուրգ

Ձեռագիրն¹ ստացա և այսօր միայն կարողացա գրաքննության հանձնել: Բարեբախտաբար ի դերն եղավ իմ հայտնած տարակույսս, թե գուցե չընդունին. այդ օրենքը միայն Անդրեոլկասից ուղարկված գրքերին համար է: Պ. Պատկանյանին² կիսնդրեմ, որ փութացնե կարդալ այն, թեպետ նա առհասարակ արագաշարժ չէ այս մասին:— Ձեռագրից սկիզբը փոքր ինչ կարդացի—շատ դուր եկավ:...

Ես արդեն վեց առարկայից գրավոր քննություն տվի (ուսուներեն շարադրություն, 4 ուսողական առարկաներ, լատիներեն). միջին թիվը գոհացուցիչից (3) ավելի է. հունարեն գրավորս (երկուշարթի) անշուշտ լավ կլինի, 4 կամ 5: Այնպես որ գրավորներս, որ զժվար—և կսրևորներն են՝ հաջող անցած կարելի է համարել:...

1 Հետագա նամակներից պարզվում է, որ խոսքը հոգևոր-բարոյական բովանդակություն ունեցող մի գրքի ձեռագրի մասին է:

2 Նկատի ունի Քերովբե Պատկանյանին, որն այդ ժամանակ վարում էր նաև Պետերբուրգի գրաքննչական ատյանի հայկական հրատարակությունների գրաքննչի պաշտոնը:

23 հունիսի, 1886

Ս. Պետերբուրգ

Վերա գուցե բարկացած լինեք, որ այսքան ժամանակ է Ձեզ անժանոթության մեջ եմ բռնկւում...

Ձեռագիրն ստանալուս պես՝ հանձնեցի գրաքննական մասնաժողովին և խնդրեցի, որ շուտով Ք. Պատկանյանին հանձնեն. հատկապես էլ Ք. Պատկանյանին հայտնեցի, որ խնդրում եք՝ կարելի շուտ վերադարձնելու նա ասաց, որ եթե խոշոր դրված լինե՞ր՝ 10—12 ավուր ետ կուզարկե՞ր, բայց որովհետև մանր գրված է՝ հարկ է խոշորացույց ապակիով կարդալ. ուստի կուշանա:

Քննություններիցս հետո (որոնք հաջողությամբ վերջացրի և ստացա հասունության վկայական) իսկույն դնացի իմանալու, թե ինչ վիճակի մեջ է այդ գրաքննությունն. Ք. Պատկանյանին արդեն ավարտել և թույլատրել էր հունիս ամսի 10-ին. ձեռագիրը մասնաժողովից ևս ստացա ամսի 13-ին. և որովհետև օրեցօր հուլյս ունեի հայրենիք գնալ Վլադիկավկազի վերայով և ուղևորությունս տեղի կունենար ամսի 20—21-ին՝ ուստի լավագույն համարեցի մի շաբաթ ևս մոտոս պահել և անձամբ ապահովապես Ձեզ հանձնելու: Այս առավոտ միայն գիտցա վերջնականապես, որ հայրենիք գնալս չի հաջողվիր (դրամի պակասության պատճառով). ուստի և իսկույն ձրար շինեցի և ուղարկում եմ ձրարը հենց այսօր:

Ձեռագիրը ես <1 անընթ. > կարդացի և շատ զոհ մնացի... գովել նրան իմ չափից վեր է. ուրեմն լավագույն է ասել, որ Ք. Պատկանյանը շատ է հավանել նրան (նա, որ քիչ անգամ մի գրքի հավանում է) և միայն այս պակասությունն է գտնում, որ իբրև բարոյական գիրք, ժողովրդի ընթերցանությանը հատկացած՝ նա շատ երկար է, թեպետ և լի բովանդակությամբ...

Քննությունները, ինչպես վերը հայտնեցի՝ վերջացրի հաջողությամբ և ամսի 14-ին ստացա վկայականս, որի չիլնելը ինձ համար անփարատելի խոշորագույն էր՝ ուսումնական կատարելապես ավարտելու: Սեպտեմբերին համալսարան կմտնեմ դարձյալ և դարձյալ իբրև ազատ լսող. երկու տարուց հուլյս ունիմ կանդիդատի քննություններս տալ նույն արևելյան լեզվագիտության ճյուղում, որով առաջ պարապում էի:

Հայրենիք չգնալս ինձ թեպետ պատճառում է տրամադրություն, բայց մանավանդ ավելի եմ տրամադ. մտածելով, թե ի՞նչ կերպով կընդունին այս լուրը ծնողքս և եղբայրս, որոնք օրեցօր սուղասում են ինձ: Ավելի ցավալին այն է, որ 80 ուրբու պակասելուն համար հրաժարվեցա եմբիսյալ ուղևորությունից: Առ այժմ միտք ունիմ շուտով Դորպատ գնալ ամառվան երկու ամիսն անցնելու և գերմաներեն լեզուն գործնականապես սովորելու համար...

19 սեպտեմբերի, 1886

Ս. Պետերբուրգ

Ձեր նամակը, որ վաղուց ստացված էր Պետերբուրգում իմ բացակայության ժամանակ, աչստեղ վերադառնալով ստացա և կարդացի:

Ձեռագիրը Թիֆլիսում անհամեմատ աժան կտպվի, ինչպես երևում է Ձեր հաշվից: Սակայն այստեղ ինձ փոքր ինչ ձանձրույթ պիտի պատճառե գրաքննության հետ բացատրությունը, նորա Թիֆլիսում տպվելու մասին: Հիշում եք, Ձեզ գրել էի, որ թույլ չեն տալիս այստեղ քննված և թույլատրված գրքերն Անդրկովկասում տպել. ես էլ խոստացել էի, թե այդ ձեռագիրը տպվելու է նախիջևանում և ոչ Թիֆլիսում: Տեսնե՞նք, մի տեսակ կվերջացնե՞մ...

Ձեր նամակն, երբ ես ստացա՝ պ. Եղյանն արդեն արտասահման էր գնացել, ի միջի այլոց՝ Կարին հանդիպելու դիտմամբ: Որովհետև Կարնո վարժարանում կրոնության պետք կա (որ ինձ վաղուց հայտնի է), ուստի առիթը չկորցնելու համար՝ Ձեր նամակն իմ նամակիս հետ միասին պ. Եղյանին ուղարկեցի թի տեղեկություն: Եթե այստեղ լինե՞ր՝ նորան անշուշտ կկարդայի այն, ինչպես պատահում է շատ անգամ: Իսկ այստեղ չլինելուն՝ հարկ համարեցի ուղարկել, որպեսզի նա այնտեղ վարժարանի տեսչության հետ իսկույն խոսելու և խորհրդակցելու լավ առիթ ունենա: Հետևանքը չգիտեմ ի՞նչ կլինի. սակայն հուսով եմ, որ Դուք վերադառնալու չեք նեղանալ:

Մյուս գործերս իրանց կարգին շարունակվում են. հունվարից կմտնեմ համալսարան, 1887—

2 տարի միայն մնալու դիտմամբ: Տեսնենք կհաջողի այս մտադրությունս: Շուտով կձեռնարկեմ Ղևոնդ պատմագիրը ծանոթագրելու¹ և Թովմա Արծրունին տպելու² (այս վերջինը պ. Պատկանյանի խմբագրությամբ):

1 «Պատմութիւն Ղեոնդեայ Մեծի վարդապետի Հայոց»-ը Կ. Եղյանի առաջարանով և Ստ. Սալյանյանցի ծանոթագրություններով լույս է տեսել 1887-ին, Պետերբուրգում:

2 «Թովմայի վարդապետի Արծրունեայ Պատմութիւն տանն Արծրունեաց» գրքի (ուսումնասիրությունը Ք. Պատկանյանի, Պետերբուրգ, 1887) հատուկ անունների ցանկը կազմել է Ստ. Սալյանյանցը:

14

18 մարտի, 1889

Ս. Պետերբուրգ

Վաղուց է տեղեկություն չեմ տվել Ձեզ իմ մասին: Մի ժամանակ լսեցի, իբր թե Դուք նախախնայեցի մեկնել եք.— ո՛ր՝ չլսեցի, ուստի և չէի կարող գրել: Վերջերս իմացա, թե Դուք դեռ նախախնայեցի եք:

Ընդհանրապես լուր կարող եմ հաղորդել Ձեզ, որ հերոս դեկտեմբերին համալսարանի քննություններս տվի ավարտեցի, և այս տարի հունվարին շարադրությունս գրեցի, այնպես որ այժմ ուսումնա ավարտած եմ համարվում և արևելյան լեզվաց կանդիդատի աստիճան ունիմ: Ապագա վիճակիս մասին հանգամանքներն այս են. Ք. Պատկանյանը ծանր հիվանդ է և առողջանալուն նույն չկա. բացի այս, նորա ծառայության պայմանաժամը արդեն վերջացել է: Արդ թե՛ համալսարանում և թե՛ արտաքուստ (պ. Եղյան, Սանասարյան) ցանկացողներ կան, որ ես մնայի համալսարանում և ժամանակով Պատկանյանի տեղն անցնեի: Եթե ես ևս նույն ցանկությունն ունենայի՝ գործը դուրսով կհաջողեր, վասնզի այստեղ համալսարանում նախընտրում են իրանյ աշակերտներից պրոֆեսորներ պատրաստել, քան թե օտարներից. բացի այս, հայերեն լեզվի և մատենագրության ամբիոնը բռնելու պատրաստ մարդիկ սակավաթիվ են. ուրեմն ես ավելի հավանականություն կունենայի այս տեղը բռնելու: Բայց ես չեմ կամենում այս ապագան մի քանի պատճառներով. նախ որ լավ եմ համարում հայրենիքումս գործել, քան այս օտար քաղաքում, երկրորդ, որ հայրենիքում ես կարող եմ շուտով տունուտեղ լինել (ամուսնանալ) և ծնողքս պատասխարել, իսկ այստեղ երկար ժամանակի կարոտ կլինեի նույն անելը. բացի այս, առողջական տեսակետն աչքի առաջ ունիմ: Ինչևիցե՝ ես այս մարտի 5-ին խնդիր ուղարկեցի կաթողիկոսին, որ առաջիկա սեպտեմբերից ինձ ճեմարանում պաշտոն տա հայերեն լեզվի (եթե պետք լինի՝ նաև մատենագրության և պատմության) ուսուցչի: Տեսնենք ի՞նչ պատասխան կըստանան: Եթե այստեղ չհաջողի՝ կդիմեմ Թիֆլիս, նախախնայ, համենայն դեպս Կարնո վարժարանի դուրս բաց է ինձ համար (Գրեյն պ. Եղյանը մի ակնարկություն արավ այս մասին՝ իմ տրամադրությունս իմանալու համար—ես ոչինչ չպատասխանեցի, չլսելու տալով):

Ուղարկում եմ Ձեզ հինգ օրինակ Վեր թագավորս ողբերգությունից: Եթե դարձյալ պետք չլինի՝ գրեցեք կուղարկեմ...

15

10 հունիսի, 1889

Ս. Պետերբուրգ

Մարտ առիթում Ձեզ ուղարկել եմ հինգ օրինակ իմ թարգմանած Վեր թագավորից և մի նախակ, որի մեջ հայտնել եմ, թե համալսարանի ուսումնա վերջացրի՞, ցանկանում եմ հայրենիք գնալ և ուսուցչությամբ պարապել, և թե արդեն խնդիր եմ ուղարկել վեհ. կաթողիկոսին՝ սեպտեմբերից ճեմարանում պաշտոն ստանալու համար:

Ձեզանից պատասխան չստացա և չգիտեմ, թե գրե՞րն արդյոք Ձեր ձեռքը հասա՞ն թե ոչ: Այս նամակս Չաքարյանի ձեռքով եմ ուղարկում, ուստի հույս ունիմ անկորուստ կստանա:

Վեհ. կաթողիկոսից մինչև այժմ պատասխան չեկավ, ո՛չ այո, ո՛չ ոչ. այնպես որ շտապում եմ շուտով Թիֆլիս ընկնելու, որ ժամանակին մի տեղ ճարեմ: Չգիտեմ նախախնայում չկա՞ ինձ համար հարմարավոր պաշտոն. երկու տարի առաջ պ. Սալթիկյանն առաջարկում էր, և ես պա-

տասխանեցի, թե ուսումնա ավարտելուց հետո ուրախությամբ պատրաստ եմ ստանձնելու ուսուցչության պաշտոն այդտեղ: Եթե ներկայումս ևս հանգամանքները նպաստավոր լինին, այսինքն էթե դպրանոցում ինձ համար տեղ գտնվի՝ հոժարությամբ կգամ: Այս բանը Ձեզ հայտնեցով՝ չստա՛հ եմ, որ առանց իմ խնդրելուս էլ կանեք, ինչ որ կարելի է, ինձ համար...

Պետերբուրգում այժմ մնալու եմ մոտ մի ամիս, մինչև ավարտիմ հորենացու աշխարհարար թարգմանության տպագրությունը², այնուհետև ճանապարհ կընկնեմ աստուծով դեպի Կովկաս. էթե մի զորավոր արգելք չպատահեցավ՝ նախիջևան էլ կհանդիպեմ հարկավ:

Եթե կարող եք մի կերպով ձեռք բերել փոքր ինչ փող ինձ համար՝ մեծապես կդյուրացնեիք իմ վիճակս. թե՛ այստեղ ապրուստի և թե՛ ճանապարհածախսի համար կարոտություն ունիմ: Միժանձույս եմ, որ հենց այս տարի (ձմեռը) միշտ կունենամ վերադարձնելու:

Մանրամասն տեղեկություններ իմ մասին կհաղորդե Ջաքարյանը, և ես էլ շուտով կգամ կտեսնվինք:

1 1889 թ. Ստ. Մալխասյանցը ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի «Հայ-սանսկրիտ և հայ-վրացական» բաժինը՝ թեկնածուի աստիճանով:

2 Խոսքը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Խորեն Ստեփաննի աշխարհարար թարգմանության («Հայկական պատմություն» վերնագրով) տպագրության մասին է (Պետերբուրգ, 1889): Գրքի «Առաջաբանի» վերջում Խ. Ստեփաննի գրում է. «Հարկավոր եմ համարում անկեղծ շնորհակալությամբ հիշել նույնպես Ս. Պետերբուրգի համալսարանի կանդիդատ հարգելի պ. Ստեփանոս Մալխասյանին, որ խորհրդով և գործակցությամբ օգտակար եղավ գրքիս տպագրությանը»:

16

4 հոկտեմբերի, 1889

Ախալցխա

Բավական ժամանակ է, որ Ձեզ նամակ չեմ գրել.— այնքան շատ էին զբաղմունքներս, որ ազատ թույլենեիս հազվադուրս էին, թեպետ շարունակ պետք էի գրում Ձեզ տեղեկություն տալու իմ մասին:

Մի ամիս սորանից առաջ, սեպտեմբերի 1-ին Թիֆլիսից եկավ իմ հաստատությունս Ախալցխայի Լերկու ուսումնարաններին՝ ավագ-ուսուցչության պաշտոնում— չեմ հիշում, այս մասին գրել էի Ձեզ նախորդ նամակումս, թե ոչ.— և այնուհետև աշխատանքի օրերս սկսան: Պետք էր ուսուցիչների խումբ կազմել «հոգաբարձուների հետ խորհրդակցելով», ինչպես կանոնագրությանը պահանջում է. թեպետ երկու խելքը մի խելքից լավ է, ո՛ր մնաց թե շորս խելքը, բայց երբ մարդիկ զանազան խելքերի են ծառայում՝ ավելի լավ է մեկի խելքը, քան շատերինը: Ուսուցիչների ընտրությունը մի փորձաքար էր, թե արդյոք կարո՞ղ պիտի լինիմ հոգաբարձության հետ համերաշխ և անխռով ապրելու և գործելու. դուրս եկավ, որ կարելի է. ես ինքս առաջինը չիշումներ արի նոցա, որով ցույց տվի իմ պատրաստականությունս՝ հարմարվելու նոցա օրինակոր պահանջներին. նոքա ևս փոխադարձ զիջումներ արին ինձ, այնպես որ ամենադժվարին դորժը, որ կարող էր գժտության հանգեցնել մեր մեջ՝ անցավ խաղաղությամբ: Տասնևյոթն ուսուցիչ. ընտրեցի (ես՝ տասնևութերորդն եմ) և ցուցակն ուղարկեցի Սրբ.Առաջնորդի հաստատության, սեպտեմբերի 4-ին, թե 5-ին: Ամսի 13-ին պաշտոնական հաստատությունն եկավ... մինչև ամսի 19-ը ներքին ուսումնարանական կարգադրություններն եզան—դասացուցակ կազմել, վեբաքննություններն անել, ուսուցիչների դասերը և դասարանները որոշել մանրամասնորեն, 150-ի չափ նոր խնդիրներ ընդունել և կարգադրել և այլն, իսկ 19-ից սկսյալ դասերը կանոնավորապես շարունակվեցան, թեպետ դասագիրքները դեռևս եկած չեն Թիֆլիսից: Այնուհետև ևս գործերս չթեթևացան. երեք շինություն (երկուսը տղայոց, մեկը օրիորդաց ուսումնարանի), 17 ուսուցիչ, 800 տղա կառավարել դյուրին բան չէ, մանավանդ որ հերվանից ուսումնարանները խառնափնթոր և անկարգ վիճակի մեջ էին. ամեն կողմից դիմում էին և դեռ դիմում են ինձ հազարավոր հարցմունքներով ու պահանջներով, որոց լրում տալն իր ժամանակին կարևոր է, մինչև դեռ ևս հետզհետե պիտի ծանոթանայի այստեղի նախկին կարգերին, ուսումնարանների ունեցած դասարանական պիտույքներին... Սոցա վերա պետք է ավելացնել, որ այս տարի Ա. դասարանները մի-մի հատ էին աղչկանց և տղայոց համար (հերոս երկ-երկու հատ էին), խնդիր տվող—

ներ շատ, տեղը՝ քիչ։ Նրնդունվածների ծնողներին պետք էր խելք հասկացնել ամեն մեկին առանձին-առանձին կրկնելով և համոզելով։ արտաքսվելու աշակերտների ծնողներին մյուս կողմից... Ձո՞րն ասիմ, կամ զո՞րն խոստովանիմ—բավական դադրեցուցին ինձ։

Այժմ գործը իր բնական ճանապարհով ընկնելու վերա է, ուստի և ես փոքր ինչ հանգիստ ունիմ։ Մխիթարվում եմ նորանով, որ այս ասարի, համեմատաբար շուտ կարգի ընկավ դործը և ինչպես երևում է խաղաղ պրտը՝ ընթանալու հաղաղ ընթանալու Ախալցխայի համար արգեն մեծ առաջադիմություն է. այսանդ օ՞ղը, թե շուրս է մեղավոր՝ չգիտեմ, սակայն թե՛ անդադրեք և թե՛ Լկողները ևս մաքրվում են խոռվությունների հարուցանելու, կուսակցությունների կազմելու Հենց մեր մանկավարժական ժողովների մեջ երկու անգամ փորձ եղավ խոռվելու բաղմությունը, բայց իմ Երեւական խոստովությունը մի կողմից և ընկերական խաղաղասիրությունը մյուս կողմից՝ սուրճի առանց աղապիսի փորձերի կրկնվելուն։ Մարդարե չեմ կարող լինել, բայց հույս ունիմ, որ լավ կանցնի այս տարի, այսինքն խաղաղ և առանց խոռվության։ Ախալցխայի անունն այնքան վատ է եղել, որ Թիֆլիսում ինձ շատերն ասում էին, որ եթե կարողանամ Ախալցխայի ուսումնարանները մի ասարի խաղաղ կառավարել՝ հմուտ մանկավարժի անուն կվստակեմ։ Այս խոսքը սուտ չէ, այլ սխալ է. ոչ թե հմուտ մանկավարժ է հարկավոր այստեղ, այլ նենգությունից, անձնական կրքերից հեռու, դործին անձնատուր մարդ։...

Կըտորների խնդրի լուծումը՝ զեռ Ձեզանից շատացա, ոչ Լի Պեանրուդից, որ զրել էի վերադառնալ։ Պարաքիս մասին, սոռացիլ չեմ, այսպես որոշեցի, որ հոկտեմբեր ամսիս մեջ այստեղ փոխառնեմ— մեկը խոսաացավ, և Ձեզ հաուցանեմ, իսկ այստեղ հետդհետե ամսականներիցս վճարեմ։ Այսպես պիտի անեմ, որովհետև Դուք ևս փոխ առաք, ինձ ապու համար, ուստի գուցե Ձեզ և փոխ սովորին նեղություն լինի այլևս սպասելու։ Ախալցխա գալուցս հետո գարձալ 100 ռ. փոխ առա, թե՛ Թիֆլիս վերադառնալիս գնալու և թե՛ ապրելու համար մինչև սեպտեմբերի վերջ։ Այս պարտքիս կեսն արգեն վճարեցի սեպտեմբերի <եմբերի> ոոճիկիցս, մյուսն էլ կվճարեմ այս ամսիս վերջը և հետո կդառնամ հին պարաքիսիս։ Այնքան բարձրվել են այս պարտքերը, թե՛ իմոնքս և թե՛ սեր տանը, որ մի ասարվան, 50-ական ռ. վճարելով գժվար թե պրծնիմ։ Պիտի աշխատիմ և խնայողությունը ձեռքից չթողնիմ։

Սնողքս լավ և առողջ եմ. Ձեզ բարևում են կարոտով։ Եզրայրս իր կնոջ հետ սեպտեմբերի սկզբներին ուղևորվեցավ Արգվին, որանդ նա ամառ ուսուցիչ է Ե. Թերևս այս ասարի քահանա ձեռնադրվի։ Ես մնացի տանը մենակ՝ հորս և մորս հետ, և խաղաղ ապրում եմ, նահապետական ժառանգների պարզությամբ։

Ճանձ, խնձոր ուղարկելը այստեղից շատ գժվար է. ինքս փող չունիմ, որ գնեմ և ղրկեմ. ունեցողները վախենում են. գլուխները քարի։

— Զգիտեմ, Ձեզ գրե՞լ եմ, թե ոռօիկս այս ասարի 1060 ոռութի է. ուսումնարանների հերվան 3000 ռ. րացիի պաաճառով։ Այս տարի ոչ միայն ես ես գրկված, այլև ուսուցիչներն և աշակերտները։ Հերու հոգաբարձությունը քարոքանք էր արել ուսումնարանները, բարոյական և նյութական...

1 Նկատի ունի Կարապետյան և Եղիստեբյան ուսումնարանները։

2 Խոսքը թվաբանական մի խնդրի լուծման մասին է (մանրամասն ան՝ Կ. Սրապյանի արխիվ, թղթ. 82, վավ. 215)։

ПИСЬМА СТЕПАНА МАЛХАСЯНЦА КЮРЕГУ СРАПЯНУ

А. А. ЗАКАРЯН

Резюме

Публикуемые письма освещают, в частности, петербургский период жизни и деятельности известного филолога, лингвиста, лексикографа Степана Малхасянца. В них содержатся также некоторые интересные факты, относящиеся к арменоведению, историографии, сведения об общественной жизни того времени.

Письма хранятся в Матенадаране, в архивном фонде Кюрега Срапяна.